ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԱԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 37 - 38 (16738) ՇԱԲԱԹ 11 ՄԱՅԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՎԱԿԵԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ

Մայիսի 9-ին, Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրից անցել է 74 տարի: Այդ օրը, ավանդույթի համաձայն, պատերազմի վետերանների մասնակցությամբ, նշվեց Թբիլիսիի «Վակե» Հաղթանակի զբոսայգում գտնվող Անհայտ զինվորի հուշահամալիրի մոտ:

Անհայտ զինվորի գերեզմանին իրենց խոնարհումը բերեցին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՎՐԱՍՏԱՆՑԻ ՀԱՅԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

74 տարի է անցել այն հաղթական մայիսից, երբ Բեռլինի կիսաավեր Ռայխստագի շենքի վրա փողփողաց հաղթական դրոշը՝ աշխարհին ազդարարելով ֆաշիստական Գերմանիայի դեմ անվերապահ հաղթանակը: Թանկ գնով նվաճվեց այդ հաղթանակը, արյունով էին հագեցված Մեծ հայրենականի բոլոր 1418 օրերը:

1941 թվականի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիայի կողմից սանձազերծված, խորհրդային ժողովրդի համար «Մեծ հայրենական» կոչված պատերազմին մասնակցեց Վրաստանի տարածքից, երկրի մոտ 3,5 միլիոն բնակչից մոբիլիզացված շուրջ 700 հազար զինծառայող, որոնցից 350 հազարն այդպես էլ չվերադարձավ հարազատ օջախ: Հարյուրից ավելի վրաստանցի պատերազմի մասնակիցներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, նրանցից 12-ը հայազգի Վրաստանի քաղաքացիներ են: Ռազմական բարձրագույն պարգեւի հետմահու արժանացան թբիլիսցի Սերգեյ Անդրեյի Օգանովը (1921-1943),

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՎՍՏԱՀ ԵՄ, ՈՐ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԳԱ ԱՅՆ ՕՐԸ, ԵՐԲ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԼԻԱՐԺԵՔ ԱՆԴԱՄ»

Մայիսի 5-ին Վրաստանում պաշտոնապես մեկնարկեցին եւ մինչեւ ամսվա վերջ կշարունակվեն արդեն ավանդական դարձած Եվրոպայի օրերը:

Միջոցառումը Վրաստանում անցկացվում է 7-րդ անգամ: Ավանդական միջոցառման շրջանակներում, ներկայացվեցին երաժշտական համարներ, ընտանեկան ժամանցային ակտիվություններ, բազմազան խաղեր, ինչպես նաեւ վրացական ու եվրոպական հեքիաթների թատերականացված ներկայացումներ, արդեն 6-րդ անգամ մանկավարժների համար կանցկացվի «Ուսուցիչը՝ ուղեկից դեպի Եվրոպա» խորագրով սեմինար, որին կմասնակցի Վրաստանի շրջաններից եւ Թբիլիսիից 150 մանկավարժ:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԼԵՀԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑԻՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 7-ին Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդայի հրավերով, երկօրյա պաշտոնական այցով, Լեհաստանում էր գտնվում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Լեհաստանի նախագահի նստավայրում դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, կայացավ Վրաստանի եւ Լեհաստանի նախագահների հանդիպումը, որից հետո անցկացվեց համատեղ մամլո ասուլիսը:

Պաշտոնական այցի շրջանակներում, Սալոմե Զուրաբիշվիլու եւ Լեհաստանի նախագահի մասնակցությամբ, անցկացվեց «Առաջնորդների երկխոսությունը. Արեւելյան գործընկերության 10-ամ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՌԱՏՈՆԸ

Մայիսի 9-ին Հայաստանը, համայն հայությունը նշեցին մայիսյան Եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման եւ Շուշիի ազատագրման օրը:

Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը եւ Շուշիի ազատագրման տարեդարձը Երեւանի «Հաղթանակ» զբոսայգում նշվեցին զինվորական քայլերթով: Այդ օրը Հաղթանակի զբոսայգի էին եկել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանը, կառավարության, խորհրդարանի անդամներ, հասարակական գործիչ վետերաններ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Նրանք ծաղիկներ խոնարհեցին Անհայտ զինվորի հուշահամալիրի անմար կրակի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելով զոհվածների հիշատակին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլու հրավերով, Թբիլիսիում անցկացվող Connecting Cultures - Shaping a Creative Future for Georgia and Europe ֆորումին աշխատանքային այցով մասնակցեց Հայաստանի մշակույթի նախարարի պաշտոնակատար Նազենի Ղարիբյանը:

Ֆորումի շրջանակներում կայացած հանդիպման նման ձեւաչափը, միջմշակութային հաղորդակցության մի նոր հարթակ է հարեւան երկրների համար, ինչը եւս շեշտվեց նախարարների մասնակցությամբ կայացած կլոր սեղան-հանդիպման ժամանակ: Նազենի Ղարիբյանը խոսեց Հայաստանի որդեգրած արտաքին մշակութային քաղաքաղաքականության մասին: Ֆորումի ընթացքում տեղի ունեցավ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք թեմաներին, քննարկվեց նաեւ նույն ժամանակահատվածում հայ-վրացական գործարար համաժողով անցկացնելու հարցը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 3-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում անցկացվեցին քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի եւ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունների միջեւ:

Հայկական պատվիրակությունը գլխավորում էր Հայաստանի ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը, վրացական պատվիրակությունը՝ Վրաստանի ԱԳ փոխնախարար Լաշա Դարսալիայի գլխավորությամբ:

Հանդիպմանը կողմերը կարեւորեցին տարբեր մակարդակներում պարբերական հանդիպումների եւ քննարկումների անցկացումը: Անդրադարձ կատարվեց փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք թեմաներին, քննարկվեց նաեւ նույն ժամանակահատվածում հայ-վրացական գործարար համաժողով անցկացնելու հարցը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԻ ԴԵՐԸ ՉԳՆԱՀԱՏՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱԳԱ ՉՈՒՆԻ

Մայիսի 10-ին Թբիլիսիում բացվեց «Ուսուցիչը՝ ուղեկից դեպի Եվրոպա» վերտառությամբ սեմինարը, որին մասնակցում են երկրի տարբեր երկրամասերից ժամանած մանկավարժներ: Սեմինարն անցկացվում է Վրաստանում Եվրոպայի օրերի շրջանակներում: Բացմանը, որին ներկա էին երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խոսքով ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին:

Իր խոսքում վարչապետը առանձնակի ընդգծեց երկրում մանկավարժի դերի եւ հեղինակության ամրապնդման անհրաժեշտությունը:

- Այն պետությունը, որը չի գնահատում մանկավարժի եւ աշակերտի դերը, ոչ միայն ապագա չի ունենա, այլ հնարավոր է, սեփական անցյալը կորցնի,- նշեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ մանկավարժների աշխատավարձը Վրաստանում միջին աշխատավարձից ցածր է, եւ սա շատ վատ է:

- Ինչպես հիշում եք այս օրերին խորհրդարանում քննարկվում է կրթության բարեփոխման մասին իմ ազգային գաղափարի նախաձեռնությունը, որի համաձայն, մեր ՀՆԱ-ի 6 տոկոսը, այսինքն՝ բյուջեի մեկ չորրորդը ուղղելու ենք կրթական ոլորտին: Սա հաջորդ տասնամյակների ընթացքում ցանկացած կառավարության համար պարտադիր կլինի: Նպատակներից մեկը բնական է, այն է, որ մանկավարժությունը, որպես մասնագիտություն Վրաստանում լինի գնահատված եւ հեղինակավոր,- հայտարարեց վարչապետը:

Նա բարձրացրեց կրթության ազգային գաղափարի հասկացությունը, բոլորին կոչ անելով համախմբվել այդ գաղափարի շուրջ: Վարչապետի համոզմամբ, Վրաստանի հաջողության միակ գրավականը կրթության մեջ է:

- Կրթությունը ճանապարհ է դեպի ազատություն, Եվրոպա, բարօրություն եւ բոլոր այն մարտահրավերների հաղթահարում, որոնք ծառացած են մեր երկրի առջեւ: Ես դրանում խորապես վստահ եմ, եւ սա միակ ճիշտ ճանապարհն է, ուստի սա ազգային գաղափար է,- նշեց Մամուկա Բախտաձեն՝ ելույթի ժամանակ:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քականության, հայ-վրացական միջմշակութային կապերի եւ դրանց հեռանկարների մասին:

Այցի շրջանակներում, Նազենի Ղարիբյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի ուղեկցությամբ, այցելեց Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի կառուցվող նոր շենքի շինհրապարակ եւ ծանոթացավ կատարվող աշխատանքներին:

Նազենի Ղարիբյանն այցելեց նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանություն:

Հայաստանի մշակույթի նախարարի պաշտոնակատար Նազենի Ղարիբյանն այցելեց Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն եւ հարգանքի տուրք մատուցեց հայ մեծերի հիշատակին: Նա եղավ նաեւ Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցի: Մոմավառությունից հետո, ծաղիկներ խոնարհեց հայ մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի շիրմին, ապա շրջայց կատարեց «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում եւ ծանոթացավ աշխատանքներին:

Նազենի Ղարիբյանը այցելեց Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցի, որի բակում ծաղիկներ խոնարհեց Սայաթ-Նովայի շիրմին:

Նախարարի պաշտոնակատարն այնուհետեւ այցելեց «Հովհաննես Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոն, որտեղ շրջայցից հետո հանդիպում ունեցավ թբիլիսահայ մտավորականների հետ:

Այցի ավարտին Նազենի Ղարիբյանը եղավ նաեւ «Գարրի Դավթյան» տիկնիկային մշակույթի տանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԱՄԼՈ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԹԲԻԼԻՍԻ

Մայիսի 3-4-ը, Վրաստանի վարչապետի աշխատակազմի մամուլի գրասենյակի ղեկավար Մայա Թաբագարու հրավերով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանը:

Մայիսի 3-ին Վլադիմիր Կարապետյանը, Վրաստանում ՀՀ դեսպան Ռուբեն Սադոյանի ուղեկցությամբ, հանդիպում ունեցավ Վրաստանի ԱԳՆ հարեւան երկրների եւ տարածաշրջանների վարչության պետ Մալխազ Միքելաձեի եւ ԱԳՆ մամուլի խոսնակ Վլադիմեր Կոնստանտինիդիի հետ:

Վլադիմիր Կարապետյանը վերահաստատեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն դիրքորոշումը, որ Վրաստանի հետ եղբայրական հարաբերություններն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում, եւ Հայաստանը մտադիր է խորացնել փոխշահավետ գործակցությունը Վրաստանի հետ:

Մայիսի 4-ին կայացավ Մայա Թաբագարու եւ Վլադիմիր Կարապետյանի հանդիպումը, որի ընթացքում քննարկեցին երկու երկրների պետական գերատեսչությունների մամուլի ծառայությունների միջեւ համագործակցության վերաբերյալ մի շարք հարցեր:

Ապա Վլադիմիր Կարապետյանը հանդիպում ունեցավ Վրաստանի առաջատար լրատվամիջոցների խմբագիրների եւ փորձագետների հետ, խոսեց Հայաստանում ընթացող բարեփոխումների ընթացքի մասին, անդրադարձավ հայ-վրացական փոխհարաբերություններին, պատասխանեց ներկաներին հուզող բոլոր հարցերին:

Թբիլիսի կատարած այցի ավարտին, Վլադիմիր Կարապետյանը «Հովհաննես Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոնում հանդիպում ունեցավ վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Շուրջ 2 ժամ տեւած հանդիպման ընթացքում Վլադիմիր Կարապետյանը փորձեց լսել բոլորին՝ անարձագանք չթողնելով որեւէ հարց:



ԹՈՒՐՔԻԱ
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՉԵՂԱՐԿՎԵԼ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մարտի 31-ին Թուրքիայում անցկացվեցին տեղական ընտրություններ: Ստամբուլի քաղաքապետի պաշտոնում, ընտրությունների պաշտոնական տվյալներով ընդդիմության ներկայացուցիչ Իմամօղլուն առաջ էր անցել կառավարող կուսակցության թեկնածու Յըլդըրըմից: Ընդ որում, ընդդիմության թեկնածուի հաղթանակը վավերացրել էր նաեւ Թուրքիայի բարձրագույն ընտրական հանձնաժողովը: Թեպետ, նույն հանձնաժողովը մայիսի 6-ին, հիմք ընդունելով էրդողանի գլխավորած Արդարության եւ զարգացման կուսակցության բողոքը, ետ է կանչել ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցությունից թեկնածու էկրեմ Իմամօղլուին քաղաքապետ ճանաչելու մասին հավաստագիրը եւ հունիսի 23-ին նշանակել Ստամբուլում նոր մունիցիպալ ընտրություններ: Սույն որոշումը խիստ քննադատության է ենթարկվել Եվրամիության կողմից:

ՌՈՒՍԱՍՏԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՎԻԱՎԹԱՐԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

Մայիսի 6-ին Մոսկվայի Շերեմետեւո օդանավակայանում վայրէջքի ժամանակ այրվեց Մոսկվա-Մուրմանսկ չվերթ կատարող Sukhoi Superjet 100 (SSJ-100) մակնիշի ուղեւորատար ինքնաթիռը: Աղետի արդյունքում, զոհվել է 41 մարդ, որոնց թվում անձնակազմի մեկ անդամ, ողջ է մնացել 37 մարդ, ներառյալ՝ անձնակազմի չորս անդամները:

Ռուսաստանի քննչական կոմիտեի պարզաբանմամբ, օդաչուների նկատմամբ կասկածները կապված են օդանավի վայրէջքի ժամանակ նրանց գործողությունների հետ: Նրանք չեն սպառել վառելիքը, ինչի պատճառով ինքնաթիռը վայրէջքի է գնացել շատ բարձր արագությամբ, որը եւ հանգեցրել է «կոշտ վայրէջքի» ու բոցավառման:

ԻՍՐԱՅԵԼ
ՂԱԶԱՅԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿՐԿԻՆ ՍՐՎԵՑ

Մայիսի 5-6-ը Իսրայելը, ի պատասխան Պաղեստինի կողմից երկրի քաղաքներին արձակված հրթիռների, ռմբակրումների է ենթարկել Ղազայի հատվածը: Երկօրյա ռմբակոծումների հետեւանքով զոհված պաղեստինցիների թիվը հասել է 27-ի: Իսրայելցիների կողմից սպանվել է 4 մարդ:

Մայիսի 6-ին Իսրայելի եւ Ղազայի հատվածում մարտնչողների միջեւ երկօրյա ռազմական բախումից հետո, Եգիպտոսի եւ ՄԱԿ-ի միջնորդությամբ, կողմերը կնքել են հրադադարի մասին համաձայնագիր:

ՀՈԲԵԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՔԵԶ, ՄԱՂՎԱԼԱ, ՎՐԱԾ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՁԱՏԱԳՈՎԻԴ

Մայիսի 6-ին Թբիլիսիի Ա. Գոռբոյեդովի անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի լեհ-լի դահլիճում կայացավ Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլու ծննդյան 60-ամյակին նվիրված հոբելյանական երեկո: Հանդիսությանը ներկա էին վրաց մշակույթի գործիչներ, բանաստեղծուհու ստեղծագործության սիրահար-երկրպագուներ, Վրաստանում ապրող եւ ստեղծագործող հայ ու այլազգի մտավորականներ, այդ թվում «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Հայաստանից հատուկ հրավիրվել էր նաեւ գրողների միության պատվիրակությունը, որի կազմում էին նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, Մ.Գոնաշվիլու երկերի թարգմանիչ, բանաստեղծ Գագիկ Դավթյանը, գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տան տնօրեն Մովսես Մանուկյանը: Երեկոյի ընթացքում հնչեցին բանաստեղծուհու խոսքերով երգի կատարումներ, ասմունք, թատրոնի դերասանների բեմականացրած թատերականացված ներկայացումը: Հյուրերն արժևորեցին բանաստեղծուհու անցած ուղին ու ներդրումը ոչ միայն վրաց գրականության, այլև այն միջազգային ասպարեզ հանելու, գրականության միջոցով բարեկամություն սերմանելու եւ հաստատելու մեջ:

Մաղվալա Գոնաշվիլին ծնվել է Կախեթիի տարածաշրջանի Դեդոփլիսծարոյի շրջանի Արբոշիկի գյուղում: 1981թ. ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել Վրաստանի հանրային հեռուստատեսությունում, ապա նաեւ «Գրապլ» ամսագրում՝ որպես խմբագիր: 2004 թ.-ից ընդմիջումներով նախագահում է Վրաստանի գրողների միությունը: Իլիա Ճավճավաձեի, Աննա Կալանդաձեի, Գալակտիոն Տաբիձեի և այլ պարգևների ու մրցանակների դափնեկիր է: Բանաստեղծական յոթ ժողովածուի հեղինակ և բազմաթիվ գրքերի, անթոլոգիաների, այդ թվում հայկական, թարգմանիչ ու խմբագիր:

Ուրախությամբ փաստենք, որ վրացհայկական ներկայիս գրական կապերի էլ ավելի ամրապնդումը նոր թափ առավ Մաղվալա Գոնաշվիլու եւ վիրահայ անվանի բանաստեղծ, թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանի միջեւ ոչ միայն գործնական, այլեւ մտերմիկ, քույրական հարաբերություններից: Հենց այդ անկեղծ ընկերությունն էր, որ պետք է էլ ավելի կամրջեր հետխորհրդային շրջանի հայ եւ վրացի գրողներին: Այդ տարիների Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի եւ Մաղվալա Գոնաշվիլու բեղմնավոր համագործակցությունն իր հունձքն է տալիս առ այսօր՝ պսակվելով փոխադարձ ու ջերմ հանդիպումներով, թարգմանական նոր գրքերի ծնունդով:

Ասենք նաեւ, որ այս տարվա աշնանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի հավաստմամբ, Մաղվալա Գոնաշվիլու հոբելյանական երեկոն կնշվի նաեւ Երեւանում:

«Վրաստան» թերթը շնորհավորում է սիրելի բանաստեղծուհուն, մշակույթի բազմավաստակ գործչին ու պարզապես գեղեցիկ տիկնոջը, մաղթելով ստեղծագործական նվաճումներ ու անսպառ եռանդ՝ ի նպաստ վրաց ու նաեւ վրաց-հայկական բազմադարյա մշակութային կապերի բարգավաճման ու շենացման:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԼԵՀԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑԻՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յակը» խորագրով համաժողով:

Այցի շրջանակներում, Վրաստանի ղեկավարը հանդիպումներ ունեցավ Լեհաստանի Հանրապետության սենատի մարշալ Ստանիսլավ Կարչեւսկու, վարչապետ Մատեուշ Մորավյեցկու հետ:

Լեհաստանի ղեկավարների հետ հանդիպումներով կողմերը քննարկեցին վրաց-լեհական տարբեր ոլորտներում համագործակցության խորացման եւ ընդլայնման, Եվրամիությանը եւ ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացին առնչվող հարցեր: Կողմերն ընդգծեցին հայացքների ընդհանրությունը եւ փոխաջակցության պատրաստակամությունը:

Սալոմե Զուրաբիշվիլին ներկա գտնվեց նաեւ «Զդանեւիչ եղբայրներ - Կիրիլ եւ Իլյա» վերնագրով գրքի շնորհանդեսին, որը նախագահին անձամբ ներկայացնելու է Քեթեւան Կինծուրաշվիլին:

Սալոմե Զուրաբիշվիլին այցելեց նաեւ Սուրբ Գրիգոլ Փերաձեի անվան մատուռ եւ սրբապատկերների թանգարան:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆՎԵՑ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Վրաստանի կառավարության որոշմամբ, սահմանվել է բազմազավակ ընտանիք կարգավիճակ տալու պայմաններն ու կարգը: Այս ծառայությունը կիրականացվի արդարադատության նախարարության պետական ծառայությունների զարգացման գործակալությունը:

Կառավարության որոշման համաձայն, բազմազավակ ծնողի կարգավիճակ ստանալու համար պետք է դիմել արդարադատության տուն, հանրային ծառայությունների զարգացման գործակալություն կամ հանրային կենտրոնի գրասենյակ: Բազմազավակ ծնողի կարգավիճակ կստանան նրանք, ովքեր կհամապատասխանեն օրենքով նախատեսված բոլոր պայմաններին:

Հատկանշական է, որ հիշյալ կարգավիճակի համար մինչ օրս չի եղել այսպես ասած ընդհանուր սահմանում եւ պատասխանատու մարմին:

Բազմազավակ ծնողի կարգավիճակի մասին որոշումը կլինի դիմումը ներկայացնելուց 30 օրացուցային օրվա ընթացքում:

Վրաստանում բազմազավակ է համարվում 4 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի ներքին գործերի փոխնախարար Նինո Զավախածեն, մինչեւ տարեվերջ, երկրի մասշտաբով գործարկվելու է տարբեր նպատակների մոտ 5 000 տեսախցիկ: Նրա խոսքով, ավելանալու է նաեւ պարեկային անձնակազմի թիվը ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ շրջաններում:

- Մեզ համար առաջնահերթություն է, որ ավտոճանապարհային պատահարների քանակը նվազի: Այդ նպատակով ավելացնում ենք տեսախցիկներ: Մինչեւ տարեվերջ, երկրի մասշտաբով գործարկվելու է տարբեր նպատակների մոտ 5 000 տեսախցիկ: Պատրաստվում ենք ավելացնել պարեկային անձնակազմի թիվը ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ շրջաններում: Նախատեսում ենք նաեւ օրենսդրական փոփոխություններ, որոնք սկսելու ենք քննարկել կառավարության հետ եւ գարնանային նստաշրջանին ներկայացնել խորհրդարան, որը կապված է ոչ սթափ վիճակում մեքենա վարելու, կանգ առնել-կայանելու կարգի խախտման, արագությունը գերազանցելու համար պատժամիջոցներն ավելացնելու եւ խստացնելու հետ,- հայտարարեց Նինո Զավախածեն:

ԱՄԱՌՎԱՆԻՑ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Վրաստանում նախատեսում են վարորդական իրավունքի քննությունն իրական երթեւեկության տարածք տեղափոխել ամռանը:



Այս մասին հայտարարել է ՆԳ փոխնախարար Նինո Զավախածեն՝ պարզաբանելով, որ գործնական քննությունը քաղաքային պայմաններում անցկացնելու հարցը երկարածգվել էր օբյեկտիվ պատճառներով: Այժմ արդեն գերատեսչությունը ենթակառուցվածքորեն եւս պատրաստ է, որպեսզի քննությունները անցկացվեն քաղաքի պայմաններում:

- Ամեն ինչ գրեթե համաձայնեցված է: Մնում է որոշակի օրենսդրական փոփոխություններ, որոնց անցկացումն անհրաժեշտ է, որ հասցնենք խորհրդարանի գարնանային նստաշրջանին,- հայտարարեց Նինո Զավախածեն՝ հավելելով, որ գործնական քննության համար երթեւեկելի մի քանի տեղանք է ընտրվել:

Հիշեցնենք՝ վարորդական իրավունքի գործնական քննությունը իրական պայմաններում նախատեսված էր կազմակերպել դեռեւս 2018 թվականի գարնանը, սակայն ժամկետը երկու անգամ հետաձգվեց:



ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ՝ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի խորհրդարանում ներկայացվել է նոր օրինանախագիծ, ըստ որի, մինչեւ այժմ վերահսկումից դուրս մնացած սպասարկման ոլորտը սեպտեմբերից պետք է խստորեն վերահսկվի: Վտանգավոր օբյեկտներից հետո, աշխատանքային անվտանգության նորմերը կստուգվեն ցանկացած ուղղության հիմնարկներում: Աշխատանքային տեսչությունն իրավունք կունենա մտնել հիմնարկներ՝ առանց նախազգուշացման, եւ պարզել, թե ի՞նչ պայմաններում են աշխատում աշխատակիցները, եւ որքանո՞վ է պաշտպանված աշխատողների աշխատանքային իրավունքները:

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այսուհետեւ, օրենսդրական արգելք է սահմանվում Վրաստանում բժիշկներին վիրավորելու համար: Այդ մասին հայտարարեցին խորհրդարանի առողջապահության հարցերով կոմիտեի նախագահ Ակակի Զոիձեն եւ առողջապահության փոխնախարար Զազա Բոխուան: Նրանք տեղեկացրին, որ խորհրդարան ներկայացված է համապատասխան օրինանախագիծը: Համաձայն օրինանանախագծի, վարչական պատասխանատվություն է սահմանվում բժիշկների, բուժանձնակազմի մյուս ներկայացուցիչների նկատմամբ վիրավորական արտահայտությունների համար: Օրինանախագծի հեղինակների հավաստմամբ, սույն նախաձեռնությունը ուղղված է ոչ միայն բժիշկների պաշտպանությանը, այլեւ հիվանդների համար արդի ու որակյալ բժշկական օգնության ցուցաբերմանը:

ՎՐԱՑԱԿԱՆ ԴԻՊԼՈՄԸ ԿՃԱՆԱՉՎԻ ՆԱԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ավարտվել է չորս տարվա նախապատրաստումը. Վրաստանում կներդրվի բարձրագույն ուսումնական հաստատությունների հավաստագրման եվրոպական չափանիշ: Երկիրը այս իրավունքը ձեռք է բերել Բարձրագույն կրթության որակի եվրոպական ասոցիացիային անդամակցելու արդյունքում: «Էնքա»-ին անդամակցությանը նախորդում էր համալսարանների ստուգման չափանիշների խստացումը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 192 ԴԵՊՔ

Ապրիլի 29-ից մայիսի 5-ը ներառյալ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ մասշտաբով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 192 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները ստուգեցին 2806 հարկատու: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները՝ առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 10 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 4 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 178 փաստ:

ԿԱՐԾԱԽԻ ՄԱՔՍԱԿԵՏՈՒՄ DUTY FREE ԿԼԻՆԻ

Ազատ առեւտրի անցակետի բացման համար էլեկտրոնային տենդեր է հայտարարվել Կարծախի մաքսակետի շենքում:

Վարչական շենքում, 10 տարի ժամկետով վարձակալմամբ, հաղթողին կհատկացվի 355.92 քառակուսի մետր տարածք:

Շենքը սեւ կարկաս (հիմնակմախք) է: Վերանորոգման աշխատանքները կատարելու է վարձակալը:

DUTY FREE-ի բացման տենդերը շահողը պարտավոր է ներկայացնել պայմանագիրը 90 օրացուցային օրվա ընթացքում: Աճուրդի վերջնաժամկետը 2019 թվականի մայիսի 27-ի մինչեւ ժամը 16:00-ն է:

ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԾԽԱԽՈՏ

Բաթումիի օդանավակայանում, «Կարմիր կամուրջ» մաքսակետում, Ղազբեգիում, Լագոդեխիում, Սադախլոյում եւ Նինոծմինդայում բռնագրավվել է 26 740 հատ չհայտարարագրված ծխախոտ: Այս մասին հաղորդում է Եկամուտների ծառայությունը:

Վրաստանի ֆինանսների նախարարության Եկամուտների ծառայության մաքսային տեսուչները, կասկածի հիման վրա, վերոհիշյալ մաքսային անցակետերում ստուգումների արդյունքում, ապրիլի 30-ից մայիսի 5-ը հայտնաբերել են չհայտագրված ծխախոտի ապօրինի ներկրում եւ այլ մաքսանենգություններ:

Պատասխանատվության են ենթարկվել Ադրբեջանի, Հայաստանի, Ռուսաստանի եւ Վրաստանի քաղաքացիներ: Խուզարկվել են ինչպես կասկածյալները, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցները, որոնցով նրանք փորձել են հատել սահմանը: Արդյունքում, առգրավվել է 26 740 ծխախոտ, էլեկտրական ծխախոտի սարքավորում (IQOS-11 հատ), ալկոհոլային խմիչք (5 լիտր), ինչպես նաեւ 626 կտոր պոլիէթիլենային շերտեր, որոնք նախատեսված են ID քարտի լամինացման համար եւ Հունաստանի եւ Լիտվայի վարորդական վկայականներ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 289-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն, իրավախախտներից առգրավվել է ապրանքը, տրանսպորտային միջոցը, իսկ նրանց պարտադրել են վճարել 1000-ական լարի:

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՎՐԱՍՏԱՆՅԻ ՀԱՅԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ախալքալաքիի Ալաստան գյուղից Լեւոն Խնկանոսի Դարբինյանը (1905-1943), թբիլիսցի Գարուշ Սերգեյի Կոնստանտինովը (Կոստանյան) (1921-1944), Վրաստանի Խորհրդային Հանրապետության Աբխազիայի Ինքնավար Հանրապետության Գումիսթա գյուղից Հարություն Խաչիկի Չաքրյանը (1918-1944), Ախալքալաքիի Զակ գյուղից Վաչագան Հունանի Վանցյանը (1913-1945), բոլնիսխաչենցի Ապավեն Վասիլի Ռոստոմյանը (1905-1945):

Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց Վրաստանի Աբխազիայի Ինքնավար Հանրապետության Գագրայի շրջանի Բաղնարի գյուղի բնակիչ Երվանդ Գեւորգի Գարանյանին (1903-1995), Կասպիի շրջանի Կավթիսխեւի գյուղի բնակիչ Սուրեն Արտյուշի Ասլամազիշվիլուն (Ասլամազյան) (1914-1970), Աբխազիայի ԻՀ Սուխումիի շրջանի Վերին Էշերա գյուղի բնակիչ Միհրան Միհրանի Բոստանջյանին (1913-1958),՝ Գորիի շրջանի Ուփլիսցիխե գյուղի բնակիչ Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլուն (Գալստյան) (1920-1981), 1920 թվականին ծնված Թբիլիսիի բնակիչ Աշոտ Մինասի Ասրյանին, Ծալկայի շրջանի Չիֆթքիլիսա գյուղի բնակիչ Աշոտ Վաղարշակի Ղազարյանին (1921-1995):

Պատերազմի տարիներին Խորհրդային Միության հերոսի կոչմանը հավասարեցված Փառքի բոլոր երեք աստիճանի շքանշանակիրներ դարձան Ախալքալաքիի Դիլիսկա գյուղից Աղասի Իգնատի Ղոչյանը, Վրաստանի Աբխազիայի Ինքնավար Հանրապետության Գագրայի շրջանի Գանթիադի գյուղից Հարութ Վարդերեսի Շուշանյանը, Ծալկայի շրջանի Ղզլքիլիսա գյուղից Վարազդատ Մակարի Ղուլիկյանը եւ Ախալքալաքիի Ալաստան գյուղից Քերոբ Պետրոսի Սերոբյանը:

Այսօրվա դրությամբ, Վրաստանում ապրում է Երկրորդ աշխարհամարտի 492 մասնակից, որից 99-ը կանայք են: Վերոնշյալ թվից 190 վետերան գրանցված է մայրաքաղաքում, 7-ը՝ Ախալցիխեի մունիցիպալիտետում, 6-ը՝ Ախալքալաքիի, մեկական՝ Նինոծմինդայի եւ Ծալկայի մունիցիպալիտետներում եւ երկուսը՝ Բոլնիս-Խաչենում:

Հավերժ փառք Հայրենիքի ազատության եւ անկախության համար զոհված հերոսներին: Մեր խոնարհումն եւ երախտագիտությունը բոլոր նրանց, ովքեր անցնելով պատերազմի թոհուբոհի միջով կերտեցին ՀԱՂԹԱՆԱԿԸ:

ՃԱՂԻԿՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՎԱԿԵԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՁԲՈՍԱՅԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, շարքային քաղաքացիները:

Վրաստանի վարչապետի խոսքով, ֆաշիզմի դեմ Հաղթանակի օրը մարդկության պատմության յուրահատուկ օրն է: Նա պատերազմի վետերաններին շնորհավորել է եւ առողջություն մաղթել:

- Վրաստանը մեծ զոհեր տվեց այս պատերազմում: Գլուխս խոնարհում եմ նրանց հիշատակի առջեւ,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

- Ցանկանում եմ բոլոր վետերաններին շնորհավորել իրենց հաղթանակի առթիվ: Հարգանքի են արժանի բոլոր այն հերոսները, որոնք զոհվել են պատերազմում: Բոլորը զոհվել են Վրաստանի անկախության համար, եւ ցանկանում եմ, որ միշտ վառ պահենք նրանց հիշատակը,- իր հերթին հայտարարեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Նշենք, որ ֆաշիզմի դեմ հաղթանակին նվիրված միջոցառմանը 600-ական լարիի չափով գումարային պարգեւ կստանան Վրաստանի շրջանների 300 վետերանները: Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածների ընտանիքները կստանան գումարային պարգեւ՝ 300-ական լարիի չափով: Համապատասխան հրամանը արձակել է Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն: Շրջաններում գումարը կփոխանցի սոցիալական ծառայության գործակալությունը, իսկ մայրաքաղաքում՝ Թբիլիսիի քաղաքապետարանը:

ՄԵՐ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ՁԵԶ, ՎԵՏԵՐԱՆՆԵՐ

Մայիսի 9-ին, արդեն հաստատված բարի ավանդույթի համաձայն, արդեն երկրորդ անգամ Վրաստանում Հայաստանի դեսպանության աշխատակիցներն այցելեցին Երկրորդ աշխարհամարտի թբիլիսահայ մասնակիցներին, իրենց երախտագիտությունը հատնում հայրենիքի անձնազոհ զավակներին, նրանց փոխանցում նվերներ:

Մեծ Հաղթանակի 74-րդ տարելիցի օրը, հավատարիմ ավանդույթին, Հայաստանի դեսպանության աշխատակիցները այցելեցին Մեծ հայրենականի վետերան, Թբիլիսիի թիվ 86 միջնակարգ դպրոցի ուսմասվար, վաստակաշատ մանկավարժ, երկու գրքի հեղինակ, «Վրաստան» թերթի հավատարիմ ընթերցող, պարբերականի հոդվածների հեղինակ, 101-ամյա **Խաժակ Եփրիկյանին,** պատերազմի ծանր տարիներին, 15 տարեկանից ռազմական հոսպիտալներում ծանր վիրավորների խնամքով ու հոգատարությամբ Մեծ հաղթանակում իր լուման ներդրած **Օֆելյա Կարապետյանին,** նույնպես 15 տարեկանից Թբիլիսիի «Արսենալ» գործարանում զինամթերք եւ հրազեն կրող, այդ ծանր աշխատանքում առողջությունը կորցրած եւ հաշմանդամ դարձած **Աղվան Սարոյանին:**

Ցավոք, օրըստօրե նվազում է այն պատմական իրադարձությունների ականատեսն ու գործող անձ հանդիսացող հերոսների թիվը: Միայն 1 տարվա ընթացքում Վրաստանը 150 վետերան է կորցրել: Նրանցից մեկն էլ **Սերգեյ Միրզոյանն** էր: Այս տարի 92 տարեկանում վախճանված վետերանը չդիմավորեց իր համար այդ նշանակալից օրը՝ Մեծ Հաղթանակի 74-րդ տարելիցը:

2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՀՌՉԱԿ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ



... Ծննդավայրդ Սեղում եւ Զալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան) սկզբնական կրթությունն ստանալուց հետո, 1883 թվականին Հովհաննես Թումանյանը գալիս է Թիֆլիս, որը Հարավային Կովկասի վարչական ու ժամանակի հայ մշակույթի ամենամեծ կենտրոնն էր՝ իր թերթերով ու հանդեսներով, թատրոնով ու դպրոցներով:

Թիֆլիսը պատանի Թումանյանի վրա թողնում է անջնջելի տպավորություն: Տարիներ հետո Ամենայն Հայոց բանաստեղծը այսպիսի հիացմունքով պիտի մտաբերեր. «Թիֆլիսը: Բայց հին Թիֆլիսը: Էս մի յուրատեսակ աշխարհ էր, որի մեջ եկել-միացել էին Կովկասի ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով եւ հորինել էին ազգերի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք... Եվ հիրավի, 1883 թվին, երբ ես առաջին անգամ Թիֆլիս եկա ուսումնարան մտնելու, ինձ թվաց, թե ընկա մի հսկայական հարսանքատուն...»: Այս ուսումնարանը Ներսիսյան դպրոցն էր, որտեղ մեծ գրողը, ցավոք, սովորել է ընդամենը երեք տարի... որքան էլ մեծ ցանկություն է ունեցել կրթություն ունենալ, այլեւս չի սովորել: Բացը լրացրել է ինքնակրթությունը: Ահա թե ինչու, Մեծ բանաստեղծի հետ շփվելով՝ ռուս մեծ գրող Վալերի Բրյուսովը նրան «ինքնակիրթ» է կոչել...

Թիֆլիսն այն քաղաքն էր, որտեղ Թումանյանն աճեց, կայացավ, բազմաթիվ կապեր հաստատեց, ծանոթացավ հայ ու վրացի մտավորականների հետ, այդ թվում՝ Ղազարոս Աղայան, Ավետիք Իսահակյան, Լեւոն Շանթ, Դերենիկ Դեմիրճյան, Վահան Տերյան, Իոսեբ Գրիշաշվիլի, Ակակի Ծերեթելի, Տիգրան Տաբիձե, Իլիա Ճավճավաձե, ուրիշներ, 1899 թվականին ստեղծեց Թումանյանական իր «Վերնատունը», 1914 թվականին Ի.Գրիշաշվիլու եւ Գ.Բաշինջաղյանի հետ Սայաթ-Նովյան Վարդատոնի հիմնաքարը դրեց, որն այս տարի տոնվելու է արդեն 105-րդ անգամ, սիրեց բոլորին ու սիրվեց բոլորի կողմից...

Բայց ամենից հետաքրքիրն ու ուշագրավը եղավ ծանոթությունը մեծ ու սիրված դերասան Պետրոս Ադամյանի հետ, ում մասին Ամենայն Հայոց բանաստեղծը գրել եւ թողել է մի հիշողություն, որն այսօր ներկայացնում ենք «Վրաստան» թերթի ընթերցողներին: Այն Թումանյանը գրել եւ նվիրել է հանրահայտ դերասանի, հայտնի ողբերգակի մահվան 25-ամյա տարելիցին:

Նշենք, որ Հովհաննես Թումանյանի գրական գործերի կողքին՝ բանաստեղծություններ, պոեմներ, բալլադներ, լեգենդներ, քառյակներ, պատմվածքներ, հեքիաթներ, հատուկ արժեք են ներկայացնում նրա հոդվածները, նամակներն ու հիշողությունները:

Ներկայացնում ենք մի քանի դրվագներ այդ հիշողություններից, որտեղ Մեծ բանաստեղծը պատմում է, թե ինչպես եւ ինչ հանգամանքներում է իրեն հաջողվել ոչ միայն տեսնել ու ծանոթանալ ժամանակի մեծ դերասանի, հայտնի արվեստագետի ու ողբերգակի հետ, դիտել մեծ դերասանի «Համլետը» եւ ուրիշ դերեր, այլ որ, Ներսիսյան դպրոցի սան լինելով հանդերձ, իրեն բախտ է վիճակվել թեկուզեւ կարճ, թեկուզեւ անհաջող ու կողմնակի դերով, բայց սիրված դերասանի հետ «խաղալ» նույն բեմում, մոտիկ գտնվել նրան, վայելել նրա ներկայությունը, նրա հիասքանչ խաղը, ըմբոշխնել նրա ձայնի ելեւէջները...

«Էսօր՝ նրա կյանքը վերապատմելու կամ նրա տաղանդը վեր հանելու ժամանակ, ես էլ ուզում եմ էն պատմել, թե երբ եւ ինչ առնչություն եմ ունեցել նրա հետ, թեկուզեւ կարճ ու կողմնակի:

...Վարար գետի նման հոսում էին Ռաֆֆու վեպերը՝ անընդհատ ու խորհրդավոր, մամուլի մեջ աջ ու ձախ շառաչալից մտրակում էր Գրիգոր Արծրունին, իսկ Թիֆլիսի թատրոնում զինվորական երաժշտությունը հնչեցնում էր «Զեյթունցիների մարշը», եւ որոտում էր Ադամյանը: Հասարակությունը խռնվում էր թատրոնի դռների առջեւ: Թիֆլիսի հայության վրա առանձնապես մեծ տպավորություն էր թողել էն չտեսնված ու չլսված հանգամանքը, որ գլխավորապես ռուս գեներալներն ու բարձր շրջաններն իրենց ընտանիքներով լցվում էին հայոց թատրոնի օթյակները...

...Դեպքը բերեց, հենց էդ օրերը, դեռ աշակերտ, եղա Ռաֆֆու մոտ, երբ առաջին փռած «Սամվելն» էր գրում ու սրբագրում: Մի քիչ հետո եղա եւ Արծրունու խմբագրատանը, մի երկու անեկդոտանման բան էլ տվի թերթի համար: Բայց ամենից դժվարն ու ամենից ծիծաղաշարժը Ադամյանի հետ ծանոթանալս եղավ: Հեշտ բան չէր էն ժամանակ Ներսիսյան դպրոցի մի աշակերտի համար Ադամյանին տեսնել բեմի վրա, որովհետեւ այս հայտնի դպրոցի աշակերտներին արգելված էր թատրոն գնալ:

Ահա էս ժամանակ, Ադամյանի թունդ ժամանակը, Լոռուց Թիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը՝ Տիգրան Տեր-Դավթյանը, որին պարտական են իմ հասակակից գրեթե բոլոր գրագետ լոռեցիները, եւ իր նախկին աշակերտներից մի քանիսին հավաքեց, թե՝ եկեք ձեզ տանեմ «Համլետ»-ի ներկայացմանը, Ադամյանին տեսեք «Համլետ»-ի դերում: Տարավ: Տեսանք: Էդ գիշերը ինձ համար եղավ կախարդական մի գիշեր եւ գրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ամբողջ գրական կյանքում...

Էն գիշերից հետո, ես գաղտնի ճանապարհով դարձյալ ընկա Ադամյանի ներկայացումներին եւ մինչեւ անգամ մի գիշեր էլ խաղացի նրա հետ:

Էդ խաղը, որ բոլորովին անակնկալ, մի սկանդալ եղավ ու խեղճ Ադամյանին գրեթե սպանեց բեմի վրա, հենց էդ խաղն էլ պատճառ եղավ, որ ես ծանոթացա նրա հետ: Էդ էլ էսպես եղավ:

...Պոլսից Թիֆլիս էր եկել իր ժամանակին հայտնի դերասան Կյուրեղյանը եւ, եթե չեմ սխալվում, տիկին Հրաչյայի հետ «Վարդան Մամիկոնյան» էին խաղալու: Ահա այդ խաղի մեջ Ադամյանն էլ վերցրել էր Եղիշեի դերը: Վարդան Մամիկոնյա՜ն... Եղիշե՜... Ադամյա՜ն... ես էլ Ներսիսյան դպրոցի աշակերտվճռեցի՝ տեսնել, ինչ ուզում է լինի, թեկուզ դպրոցից դուրս անեն: Մի բարի հոգի ինձ սովորեցրեց, թե էնպես մի կարճ ու ապահով ճանապարհ կա, որ հա'մ Ադամյանին կտեսնես, հա'մ Վարդան Մամիկոնյանին, դեռ նրանց հետ էլ կխաղաս ու քեզ էլ դպրոցից դուրս չեն անիլ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)